ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՄՈՌԱՑՎԱԾ ՁԵՎԵՐ

Վ. Հ. ԲԴՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Հայկական լեռնաշխարհում տեղափոխման միջոցները նույնքան բազմազան են եղել, որքան բարդ ու այլազան են նրա աշխարհագրական պայմանները։ Այդ միջոցների մեծ մասը հնագույն ժամանակներից հասել է մինչև XX դ. սկիզբը. դրանց վերապրուկները հարատևում են նաև այժմ։ Բայց տեղափոխման տեխնիկայի մի մասը, որ վերաբերում է մեծ ծանրությունների փոխադրմանը, գոյականության մեջ կամ իսպառ չի արտացոլվել և կամ աննշան տեղ է գտել։ Այդպիսի ծանրություններից են՝ շրաղացի ու ձիթահանի քարերը, ձիթահանի (մի տեսակի) մամլիչ գերանները, եկեղեցիների և գերդաստանական մեծ գոմերի հեծանները, շինությունների հիմքերում և պատերում զետեղվող մեծածավալ քարերը, շիրմաքարերը, խաչքարերը և այլն։ Տեխնիկայի պատմությանը քիչ բան է հայտնի, թե մասնավորապես սայլուղիներ չունեցող Սյունիքում, Հայկական Տավրոսում և դրանց հարակից շրջաններում ինչպե՞ս են տեղափոխվել մեծ ծավալի հասնող ծանրությունները։

Այդ հարցերին է նվիրված ներկա հոդվածը, որի վերաբերյալ ազգագրական տվյալներ ենք հավաքել 1950—1960-ական թվականներին։ Դիտենք, սակայն, որ այդ նյութերը սակավ են, երբեմն պակասավոր, թեև մեծարժեք։ Պատճառն այն է, որ բանահավաքումն ուշացած է։ Այժմ հազվագյուտ են այն մարդիկ, որոնք տեղափոխման հնագույն ձևերի վերաբերյալ հիշողություններ են պահել։ Այդ տեղեկությունները մեծ մասամբ քաղված են Աղձնիքի բնիկներից, որոնք 1910—1920-ական թվականներին վերահաստատվել են Թալինի ու Աշտարակի շրջաններում, Արարատյան հովտում և այլուր[1]։ Մասնակի, բայց արժեքավոր տեղեկություններ ենք քաղել Սյունիքի որոշ վայրերից, Տավուշից և Նախիջևանի լեռնային մասերից, ինչպես և առանձին ուսումնասիրություններից[2]։

Գերանատարությունը ներկայումս իրացվում է մեքենաներով և այլ միջոցներով, որոնց նախորդել են անանիվ և անիվավոր հին փոխադրամիջոց-

---

1 Աղձնիքի Սասունն գավառի տվյալների առաջին տեղեկությունները հաղորդել է բանասաց Եղիազար Կարապետյանը, որը դեռևս 1950-ական թվականներին նկարագրել է շրաղացաքարեր տեղափոխելու տեխնիկան։ Նա հետագայում այդ հարցերն արծարծեց իր «Սասուն» գրքում (Երևան, 1962), իսկ գերանատարության վերաբերյալ առաջին տեղեկություններն ստացել ենք Ռշտունիքից Վարդենիս տեղափոխված բնիկներից, 1961 թ.։ Այնուհետև քարատարության վերաբերյալ տվյալներ են հավաքվել բաղեշցիներից, խութեցիներից և ուրիշներից։

2 1968 թ. պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող Թ. Մնջոյանին (Սասունից) հանձնարարեցինք գրել դիպլոմային աշխատանք «Սասունի փոխադրամիջոցները» թեմայով։ Թ. Մնջոյանը հորից (այժմ հանգուցյալ) և ուրիշներից հավաքած նյութերի մեջ ուշագրավ տեղեկություններ էր զետեղել նաև գերանատարության ու քարատարության վերաբերյալ, որոնք հետագա հոխացմամբ օգտագործել ենք այստեղ։

ները կամ քաշելով տանելու եղանակները։ Իսկ երկրի անհարթ տարածքներում, փողոցաղուրկ բնակավայրերում և այլուր, որտեղ հիշյալ փոխադրամիջոցներով աշխատելն անկարելի էր, գերանը տեղափոխվում էր բռնելով և ուսելով։ Ծանր գերանները, որոնք օգտագործվում էին ձիթահաններում՝ մամլիչներ և մեծ շինություններում՝ հեծաններ, տեղափոխվում էին 2—3 տասնյակ մարդկանց միջոցով, յուրաքանչյուրի համար նախատեսնելով 3—5 փութ բեռ։ Ձեռքով բռնելու կամ ուսելու համար ըստ տանող զույգերի կամ քառյակների թվի գերանի վրա խաչաձև ձողեր էին կապվում։ Ընդ որում՝ ձեռքերով բռնած տանողների համար մի ձող էր կապվում, որպիսի ձևը մինչև XX դ. սկիզբը պահպանվել էր Աշտարակի գյուղերում։ Այստեղ և այլուր գերանի հաստ ծայրը բռնում էին երկարահասակները, բարակ ծայրը՝ կարճահասակները (նկ. 1)[3]։

Նկ. 1. Գերանատարությունը Աշտարակում։ (Այս և մյուս գրչանկարները մեր վերականգնումների հիման վրա կատարել է Գաբրիել Շիրինյանը)։

Օրդուբադի շրջանի Ռամիս լեռնային գյուղում ճիշտ այդպիսի ձողերով գերանը տանում էին նաև ուսելով[4]։ Ավելի ստույգ, ձողը նստում էր ծոծրակամատի վրա, որը ցավ էր առաջացնում[5]։ Տանողների թիվը որոշվում էր գերանի մեծությամբ՝ մեկ բեռը 3—4 փթից ոչ ավել։

Մեծ գերանն ուսով տեղափոխելու ավելի կատարյալ եղանակը պահպանված էր Աղձնիքի լեռնային մասերում։ Այստեղ 8—10 մ երկարության գերանի վրա խաչաձև ձողեր էին կապում, ինչպես Աշտարակում և Օրդուբադում։ Ապա սրանց վրա դարձյալ խաչաձև, գերանին զուգահեռ նոր ձողեր էին կապում, որոնք լիովին հնարավորություն էին ընձեռում գերանն ուսած ուղիղ

3 Պետք է ենթադրել, որ ձեռքով տարվող հաստ գերանի բռնաձողերը տակից կկապվեին այն դեպքում, երբ վրայից կապելիս վերցնողներն այն գետնից բարձր պահել չէին կարողանում։ Այս պարագայում անհրաժեշտորեն պետք է առնվազն երկու քառակող փայտով ուղեկցողներ լինեին, որպեսզի հանգստի կամ հերթափոխության դեպքում գերանը հանգչեր դրանց վրա։

4 Բանասացը Ռամիս գյուղացի Մկրտիչ Մանասերյանն է, որն այժմ բնակվում է Երևանում։

5 Ցավերը մեղմացնելու համար տանողը վզին շորեղեն էր դնում և զույգ ձեռքով բռնելով ճնշումը մեղմացնում։

ծայրել (նկ. 2)։ Տանողներին օգնելու և նրանց անվտանգությունն ապահովելու նպատակով գերանի ծայրերին ճոպան էին կապում։ Գերանի հաստ ծայրն ուղղում էին առաջ. վերելքի ժամանակ նրա ճոպանից (նկ. 2Ա) զգուշորեն ձգում էին մի խումբ մարդիկ, որպեսզի գերանը պատահաբար ետ չձգվեր և ուղղներին չվնասեր։ Գերանի բարակ ծայրին կապած ճոպանից (նկ. 2Բ)



Նկ. 2. Գերանատարությունն Աղձնիքում։

մի քանի հոգի ձգելով պահում էին վայրէջքների ժամանակ, որպեսզի հեծանը մարդկանցով չգահավիժեր։ Գերանատարության այս ձևը հնարավորություն էր ընձեռում տանել 4—5 փութ բեռ։

Գերանատարության այս դասական եղանակը մեզ բերել է այն համոզման, թե միջնադարում հայերը սեփական ռազմական բաբաններ են ունեցել, որոնցով քանդում էին թշնամիների բերդերն ու պարիսպները։ Ինչպես հռոմեացիների համար սաբեյրների պատրաստած խոյահարող երկաթածայր գերանը[6], հայկական բաբանն էլ կարող էր ունենալ նման երկաթե սուր ծայրակալ, որով ավելի հզորացած գործիքն առավել ուժգնությամբ կքանդեր թշնամու ամրությունները[7]։

Գերանատարությունը հայտնի է նաև քաշելու եղանակով։ Ընդ որում՝ մարդկային ուժով քաշելը, որ ամենանախնականներից մեկն էր լինելու, որևէ կերպ չի ուսումնասիրված։ Վաղնջական շրջաններից սկսած դրան փոխարինել է

---

6 Տե՛ս և հմմտ. Պրոկոպիոս Կեսարացի, Երևան, 1967, էջ 262—263, 272։

7 Հայ պատմագրության մեջ խոյահարող մեքենաները հայտնի են բաբան, խոյ, էշ, բալիստա, մանգղիռն, փիլիկոն, քարընկեց անուններով։ Բայց այդ մեքենայի տարբերակի ազգային պատկանելությունը հաստատող փաստեր չունենք։ Աղձնիքի գերանատարությունը առայժմ միակ փաստն է, որի հետքերով գնալով գուցե մասնագետները նոր տվյալներ գտնեին։

Ուսով տարվող գերանն այդ նպատակին ծառայելու օգտին է խոսում այն ռազմական կարգապահության ոգին, որը նկատվում էր տեղափոխման ժամանակ և որը Աղձնիքի նման մի նահանգում պատմական անցյալի համար շատ կարևոր էր։

լծկաններով քաշելը։ Վերջինս Հայաստանում հարատևում էր մինչև 1950-ական թվականները։

Գերանի տեղափոխման մի այլ ձևն իրացվում էր բալխիրներով. վերջիններիս բարձում էին մի քանի գերաններ և քաշում 5—6 զույգ լծկաններով (նկ. 3բ)։ Աննպաստ ճանապարհներին ցամաքի վրա բալխիրն ավելի անվտանգ փոխակրանք էր, որից առավելապես օգտվում էր արևմտահայությունը։ Բալխիր-քարքաշներին հետագայում փոխարինել են անիվավոր փոխա-



Նկ. 3ա. Ջրաղացքարը մի գերան-քարքաշով տեղափոխելու եղանակը Օրդուբաղի Ռամիս գյուղում. բ. Բալխիր՝ ցամաքի վրա գործող սահնակ՝ գերանատարության և քարատարության համար։

դրամիջոցները։ Վերջիններս անցյալում երկանիվ և քառանիվ սայլատեսակներն էին, որոնցով գերան տեղափոխելու եղանակները հարատևեցին մինչև տեխնիկայի լայն տարածումը։

Որոշ պարագաներում գերանատարության համար ոչ թե սայլը, այլ նրա անիվներն էին օգտագործվում։ Արճեշի լեռնային գյուղերում գութանի մեծ անիվի մեծությունի երկու գերանատար ակներ էին շինում, գերանի հաստ ծայրը դնում էին կարճ սռնու վրա, կապում և եզներով քաշում, փայտի բարակ ծայրը քաշան էր գնում (նկ. 4բ)։ Ապարանում XX դ. սկզբներին պահպանված էր երկանիվ սայլի սռնին անիվներով թափքից ազատելու և գերանի

կենտրոնամասի տակը տեղավորելու սովորությունը։ Հավասարակշռված գերանը գետնից կտրվում էր և տարվում լծկանով[8]։

Անիվներով գերան տեղափոխելու ավելի հարմար ձևը մի քանի սոնու օգտագործումն էր։ Զիթահանի գերաններից յուրաքանչյուրն ունենում էր 20



Նկ. 4 ա. Գերանատարությունը հարք գավառում, սայլի մի շարք անիվների օգտագործմամբ. բ. Գերանատարությունն Արճեշում. գ. Ջրաղացքարի և ձիթահանաքարի տեղափոխումը սայլով, Ապարանում։

—100 սմ տրամագիծ[9]։ Դրանք անիվներով տեղափոխվում էին մեկական։ Այգպիսիների տակը մինչև 5 զույգ անիվ էին զետեղում և շղթաներով ամրացնում։ Քաշող ուժերի թիվը հասնում էր 4—6 լծի (Նկ. 4ա)։

Առավել դժվարությունների հետ էին կապված ջրաղացաքարերի, ձիթահանների քարերի, շիրմաքարերի և այլ տեղափոխումներ։ Սակավ բա-

---

8 Լծելու համար գերանի առջևի ծայրի վերին քթի վրա նեղ կացնով ծակում էին և հաստ փոկից օղակ շինում (որը ցարդ Ջավախքում բարիծ է կոչվում)։

9 Հարք գավառի Ցոնշալու գյուղում ձիթահանի մամլող երեք գերաններից ամեն մեկի հաստությունը մոտ երկուական գիրկ է եղել։ Զիթահանատեր Խչեն (Խաչատուր) 1900 թ. դրանք մեկ առ մեկ տեղափոխել է Սարիղամիշից, 5 զույգ անիվների վրա բարձելով և վերելքներում 5 զույգ գոմեշ լծելով (Հաղորդեց յոնշալեցի, տեղափոխմանն ականատես Գրիգոր Մանուկյանն՝ էշմիածնում, 1969 թ.)։

ցառությամբ այդ քարերի մեծ մասի հանքավայրերը դժվարամատչելի են եղել։ Խոր ձորերից և ժայռոտ լեռներից դրանց տեղափոխումը կատարվում էր տարբեր միջոցներով։ Վերջիններից մեկը քարը ուսելով տանելն էր, որը նույնպես նախնականության կնիք է կրում։ Ջրաղացաքարի անցքի մեջ ամուր սոնի էին մտցնում և յուրաքանչյուր թևի տակ 6—8 մարդ մտնելով դանդաղորեն, համաչափ քայլերով տեղ հասցնում։ Տեղափոխման այս ձևը նույնպես դանում ենք Աղձնիքում։ Տիգրանակերտի դավառի Մոտկանի շրջանի Թաղիր գյուղում և նրա հարևան բնակավայրերում ուսով քար տեղափոխելու այս եղանակը հարատևում էր մինչև XX դ. սկիզբը (նկ. 5)[10]։ Այդ նույն ժամանակաշրջանում Գրիգոր Վանցյանը հավաստում էր, թե «Մեղրիում, ուր ճանապարհները վատ են և սայլ չի բանում, տան գերանները, ջաղացի և գերեզմանի քարերը գյուղացիք իրանց ուսերով են կրում՝ 30—40 մարդ միաժամանակ»[11]։

Ջրաղացի և ձիթհանի քարերը տեղափոխելու մի այլ ձևն իրացվում էր քարքաշներով։ Ամենատարրական քարքաշը պատրաստում էին երկճյուղ հաստ



Նկ. 5. Քարատարությունը Տիգրանակերտում՝ խմբովի ուսելով։

ծառից։ Սասունում սրա «կենտրոնի փորվածքի մեջ տուղղահայաց տնկում էին 50 սմ բարձրությամբ մի կլոր փայտ, որը կոչվում էր ըմբուկ...։ Քարը քարքաշի վրա պառկեցնելու ժամանակ ըմբուկը անցնում էր քարի անցքից դուրս, և քարն այլևս այս ու այն կողմ փախչել չէր կարող։ Քարքաշի հաստ գլուխն

10 Պատմեց Թաղիրցի, այժմ Երևանի բնակիչ Հովհաննես Աբրահամյանը 1969 թ.։

11 Գրիգոր Վանցյան, Նյութեր հայ համայնքի ուսումնասիրության («Մուրճ», 1896, № 1, էջ 91)։

Ամենայն հավանականությամբ Մեղրիում ևս ջրաղացաքարը սոնիով էին վերցնում։ Բացառված չէ, որ քարը և ջիրմաքարը զետեղվեին պատգարականման սարվածքների վրա, որոնցով բեռներն ապահով տեղ կհասցվեին 4 թևերից 1—2 տասնյակ մարդկանց ուսերով։

ուներ կացնի նեղ բերանով փորված մի անցք, որ կոչվում էր թորիծ[12]։ Շղթան բռնում էր թորիծից...»[13]։

Շամշադինի լեռնային գյուղերում ձիթահանի քարը տեղափոխող այդ երկճյուղ քարշակն ունենում էր 45—50, իսկ ճյուղերը՝ 30—40 սմ հաստություն։ Քարը դրվում էր ճյուղերին և շղթայով կապվում 4 տեղից։

Նախիջևանի լեռնային գյուղերում իբրև քարքաշ օգտագործվում էր երեսը հարթեցրած և տակը անտաշ, կլորավուն թողած գերանը, որպեսզի շփումը թույլ լիներ։ Սրա առջևի ծայրը, երբ բնական կեռություն չէր ունենում, տաշելով էին կորացնում։ Քարի անցքի դիմաց գերանի վրա նույն մեծության անցք էին փորում և վերևից այդ երկուսի մեջ պինդ վարտում 250 սմ երկարության մի ձող։ Նրա վերին ծայրին կապում էին երկու պարան, որպեսզի ընթացքի ժամանակ կողքերից 5—7-ական մարդիկ բռնելով-ձգելով քարը պահեին հավասարակշռության մեջ (բռնողները նույնքան էլ փոխարինողներ ունեին)։ Կեռ մասից լծում էին եզներ և քաշում (նկ. 6ա)։

Վերոհիշյալ Ռամիս գյուղում այս ձևով ջրաղացաքարը բերում էին հեռավոր վայրերից, որը 3—4 օր էր տևում։ Նրանք վերելքներին և հարթ ճանապարհներին լծում էին 16, իսկ վայրէջքներին՝ 4—5 զույգ եզ[14]։ Տեղ հասնելիս ջրաղացաքարը իջեցնում էին և ուղղահայաց դիրք տալով կարճ սռնի անցկացնում, գլորելով տանում էին, տեղադրում։

Ձիթահանի և ջրաղացի քարեր տանող միջոցներից մեկը ներկայիս Հայաստանի հյուսիսային լեռնա-անտառային շրջաններում եղել է բալխիրսահնակը, որին արկղաձև ամուր թափք կցելով՝ լծկաններով տեղափոխում էին նաև խաչքարեր, շիրմաքարեր, որմնաքարեր և այլ ծանր բեռներ։

Նպաստավոր մակերես ունեցող վայրերում ձիթահանի և ջրաղացի քարերի տեղափոխման եղանակներից մեկը գլորելով տանելն էր։ Ամենապարզ ձևը քարին երկար ու հաստ սռնի անցկացնելն ու գլորելն էր։

Բաղեշի Նահանգի Սղերդ գավառի Սղունդ գյուղի բնակիչների[15] հավաստմամբ՝ այդ բնակավայրերից 3 կմ հեռավորության վրա գտնվող հանքավայրերից քարը տեղափոխում էին այսպես. տեղում մշակված քարին հագցնում էին 6—7 մետրանոց և քարի անցքին համապատասխան հաստության հղկած ամուր փայտ։ Անցքի մեջ սեպեր էին խփում։ Ապա հաստ ճոպանները կապում էին սռնու երկու ծայրին, որոնցից ձգված պահելու-զսպելու էին 6—8-ական մարդիկ։ Ձգում-զսպումը տեղի էր ունենում վայրէջքներում։ Իսկ սռնու երկու թևերից հարթ տեղերում և վերելքներում հրում էին 6—8-ական կտրիճներ։ Հրելիս քարը և սռնին պտտվում էին. երկու հոգի էլ հրում էր քարը։ Այդպիսով՝ հրողների թիվը հասնում էր 14—18 հոգու, իսկ զսպողներինը՝ 12—16։ Վերելքներին զսպողները դառնում էին ձգող-քաշողներ։ Նույնքան ձգողներ ու հրողներ հետևում էին աշխատողներին՝ հոգնած պահերին փոխարինե-

---

12 «Գերանները փոխադրելու ժամանակ դրանց գլուխները նույնպես թորիծ էին անում, շղթան անցկացնում միջից, լծում եզներին ու գետնի վրա քաշ տալով բերում հասցնում տեղ» (տե՛ս Եղիազար Կարապետյան, նշվ. աշխ., էջ 53)։

13 Նույն տեղում։

14 Այլ վայրերում էլ երկճյուղ քարշակին գրեթե նույնքան եզներ էին լծում, որոնց թիվը վայրէջքներում պակասում էր։

15 Մի խումբ պատմողների մեջ աչքի էր ընկնում այժմ Ուշանի բնակիչ Առաքել Գրիգորի Մանուկյանը (ծնվ. 1895 թ.), որը մասնակցել է քարը տեղափոխելուն։

լու համար։ Հարկ եղած դեպքերում փոխարինողները օգնում էին հրողներին ու ձգողներին[16]։

Ուրֆայի հարթավայրերում ջրաղացաքարերը տեղափոխում էին գլորելով՝ լծկանի և մարդկանց փոխգործողությամբ։ Ողորկ և երկար սռնու եր-



Նկ. 6 ա. Քարատարությունը Խլաթում. բ. Ջրաղացաքարը սռնիավորելով տեղափոխելու եղանակ Սղերդում. գ. Քարատարությունը Ուրֆայում՝ լծակների միջոցով. դ. Ջիթահանի քարը սռնիավորելով և լծկանների օգնությամբ տեղափոխելը Գոլխում։

կու կողմերից շղթայի քարշակ էին պատրաստում և լծում։ Մի մարդ նստում էր եզների լծին և սռնու թևերից 5—7-ական մարդ քարը պահում էին հավասարակշռության մեջ (Նկ. 6գ)։ Տեղ-տեղ նրանք նաև հրում էին։ Իսկ Հրորք գյուղում և սրա նման դարուփոս բնակավայրերում եզ լծելն արգելվում էր.

16 Միայն մարդու ուժով քար տեղափոխելու պատճառը լծկանների համար ճանապարհների անմատչելիությունն էր։

քաշելը, հրելը և պարաններով զսպելը խնամքով կատարում էին տասնյակ մարդիկ[17]։

Այդ նույն ձևը կիրառվում էր Գորիսում, որտեղ ձիթահանի քարը տեղ հասցնելու համար վերելքներում 40 զույգ եզ էին լծում (նկ. 6դ)։ 1952 թ. գորիսեցի մի խումբ ծերունիներ հավաստում էին, թե այդ 40 զույգ լծերն ունեին իրենց հատուկ կոչումները, որ արդեն մոռացված են։ Պետք է դիտել, որ Արևելահայաստանում այս գործի մանրամասնությունները մոռացված լինելով մենք չգիտենք, թե ձիթահանի և ջրաղացի քարերը տեղափոխելիս վայրէջքներում զսպելու ի՞նչ ձևեր կային։ Մի բան հաստատ է, որ առանց այդպիսի հարմարանքի անկարելի էր լանջամասերից ցած իջեցնելը. քարը «փախչելիս» կարող՝ էր կործանել թե՛ ամբողջ քաշող ուժերը և թե՛ անձնակազմի շատ անդամների։

Ձիթահանի և ջրաղացի քարերը գլորմամբ տեղ հասցնելու մի կատարյալ զարգացած եղանակը պահպանված էր Սասունում։ Այդ դասական ձևը նախորդ նկարագրվածների իսկական սինթեզն էր։ Այդ եղանակը տարվող քարին դաղգահաձև սարվածքի մեջ առնելն էր՝ ճախարակ անունով, որի նկարագիրը հետևյալն է. «60 սմ երկարությամբ կաղնու մի կլոր փայտ էին շինում ճիշտ գրտնակի ձևով, այն անցկացնում էին քարի բկի մեջ և փայտե սեպերով ամրացնում, որ բոլորովին տեղից չշարժվեր։ Գրտնակի երկու ծայրերը հավասար չափով երկարում էին քարի երկու կողմերի վրա, և քարն իր շուրթի վրա պահվում էր կանգուն դրությամբ։ Հինգ մետր երկարությամբ երկու երկար ձող, որոնց կենտրոնում բացվում էին կլոր անցքեր՝ գրտնակի դուրս ընկած ծայրերը միջից անցկացնելու համար, իսկ չորս ծայրերն ունեին դուրս փորված, թեք դրությամբ երկարավուն չորս անցք, ջրաղացքարի երկու երեսներից հագցնում էին գրտնակի ծայրերին, բայց այնքան թույլ, որ գրտնակը ծակերի մեջ հանգիստ պտտվեր։ Ձողերի ծայրամասերը երկարում էին քարի առջևի ու ետևի կողմի վրա, իսկ քարը մնում էր նրանց մեջտեղում կանգնած։ Բացի այդ, կար ուրիշ չորս ձող ևս, որոնց հաստ գլուխները տաշում էին ուրագով, տափակ ծայրերը խաչաձև անցկացնում առաջին փայտերի գլխներին փորված անցքերից և այդ բոլորի գլուխները շղթաներով կապում, ամրացնում իրար։ Վերջին չորս ձողերի ծայրերը, երկուսը՝ քարի աջ կողմից, երկուսը՝ ձախ կողմից, թռչունի թևերի պես տարածվում էին օդի մեջ և այս գործողությամբ ճախարակն արդեն պատրաստ էր։ Գութանի շղթայի մեկ ծայրը փաթաթում ամրացնում էին ճախարակի առջևի մասին, շղթան բաց անում գետնի վրա, 8—10 զույգ եզ լծում շղթային, որ հոտաղները ձեռքերը լուծերի վրա գրած, պատրաստ սպասում էին հրամանի։ Օդում փռված ամեն մի ձողից 5—6 տղամարդ երկու ձեռքով պինդ բռնած ու կուրծքը դեմ տված, երկու կողմերից պահպանում էին հավասարակշռությունը, որ շարժվելիս քարը որևէ կողմի վրա չթեքվեր։ Հրաման էր տրվում... քաշելու։ Հոտաղներն իսկույն ցատկում, նստում էին լուծերի մեջտեղը և միասին ձայն տալիս. եզները օդում էին շղթան ու քարը, հենված 20—30 մարդու թևերի վրա, պոկվում էր տեղից և սայլի անիվի պես գլորվում առաջ։ Ահա այս ձևի ճախարակի միջոցով ջրաղացի քարերը խոր ձորերի միջից բարձրացնում, հանում էին սա-

17 1969 թ. սեպտեմբերին Ուշանում հաղորդեցին մի շարք ուրֆացիներ, որոնցից 1895 թ. ծնված հրորքեցի Վարդան Շահբազի Թադևոսյանը մասնակցել է քարատարությանը։

րերի գլուխը և այնտեղից էլ հարթ կամ խորդուբորդ ճանապարհով տանում հասցնում անհրաժեշտ տեղը»[18] (նկ. 7)։

Վերոհիշյալ ձևերի մեջ, սակայն, ապահովության տեսակետից ավելի կատարյալ էր քարերը զույգ անիվ ձևացնելով քաշելը, որ տարածված էր Խըլաթում։ Ջիթահանի կամ ջրաղացի քարերը զույգ-զույգ ամրացնում էին կլո-



Նկ. 7. Քարատարությունը Սասունում, ճախարակ կոչվող սարվածքի օգնությամբ։

րացրած և հղկած մի սռնու, որ վերջինս պտտվեր առեղների վերջածայրերին ամրացված ճաղերի մեջ (նկ. 6ա)[19]։ Առեղին հարթ տեղերում լծում էին մի զույգ գոմեշ և 2 զույգ եզ, իսկ վերելքներին՝ ավելի[20]։

Քարատարության նախնական ձևերից մեկը գրաստով տեղափոխելն էր, որի վերաբերյալ տեղեկությունները հաղորդել են Աղձնիքի տարբեր վայրերի բնակիչները։ Բաղեշի նահանգի Խասխեր (Խըսխեր) շրջանում վարպետները[21] ջրաղացաքարը 4 կտորից էին շինում։ Դրանցից երկուսը թեռերի մեջ վետեղելով բարձում էին մի ջորուն (նկ. 8—բ) և երկու ջորիով տեղ հասցնելուց հետո քարի կտորները հմտորեն միացնում, երկու դողով ամրացնում ու գոր-

---

18 Ե. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 52—53։

19 Առեղի այդ քաշող ճաղերի արանքները գոգավոր բարձեր էին դնում, որպեսզի սռնու պտույտը դյուրանար և առեղածայրերն էլ չմաշվեին։ Ճանապարհին սռնու գործող մասերը և հիշյալ բարձերը քսվելուց տաքանում և այրվում էին, ուստի օճառափրփուր էին քսում։

20 1969 թ. պատմեց Խլաթի Տափավան գյուղացի, այժմ էջմիածնարնակ, Հայրապետ Հարությունյանը (ծնվ. 1885 թ.)։

21 Հատերին հայտնի քարահանքը, ուր արտադրվում էր ընտիր կարմիր քար, գտնվում էր Գյառա Ատեյի բնակավայրի մոտ, Նույնանուն լեռան մեջ։

ծարկում էին[22]։ Սասունի Հազզո գյուղաքաղաքի և նրա շրջակայքի հայերը ջրաղացքարը տեղափոխում էին ամբողջական. համեստած երկու ջորիների մեջքերին հանգչում էին քարի երկար սռնու երկու ծայրերը և կապվում այնպես, որ սռնին բոլոր պարագաներում անշարժ լիներ (նկ. 8—ա)։ Մի շարք մարդիկ կրնկակոխ հետևում էին գրաստներին և հարկ եղած դեպքում օգնում[23]։

Այսպիսով՝ այդ տվյալների հիմնական հայրենիքը Հայկական Տավրոսն էր և ապա արդի Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանները՝ Տավուշը, Լոռին, Զանգեզուրը, Մեղրին և այլն։

Նկ. 8. Ջրաղացի քարի տեղափոխումը ջորիներով. ա. Սասունի Հազզո գյուղաքաղաքում. բ. Բաղեշի Խասխեր շրջանում։

Երկրի մյուս բոլոր մասերում գերանատարությունն ու քարատարությունը կատարվել են անիվավոր փոխադրամիջոցներով։ Այդպես, օրինակ, Ապարանի շրջանի գյուղերը ջրաղացքարը տեղափոխում էին Ջուլֆայից կամ Լոռուց՝ երկանիվ ու քառանիվ եզնասայլերով։ Քարի անցքում ամրացնում էին ամուր ու երկար սռնի։ Սայլի առեղների այն կետերում, որոնք բեռը հավասարակշիռ պիտի պահեին, դնում էին հաստ բարձեր, իսկ քարի սռնու ծայրերը հանգչեցնում էին դրանց վրա և շղթաներով կապկպում։

---

22 Պատմ.-ից նշված շրջանի բնակիչ, այժմ ուշանցի Ասատուր Պ. Մանուկյանը՝ 1969 թ. սեպտեմբերի 25-ին։

23 Պատմեց հազզոցի, ականատես, 1904 թ. ծնված Պողոս Տոնոյի Սարգսյանը 1969 թ. սեպտեմբերի 25-ին, Ուշանում։

Դիտենք, որ ջորիներով որմնաքարեր տեղափոխելը շատ դժվարամատչելի տեղերի թվում մասնավորապես հայտնի էր Մեղրիում։ Գրաստի համեստից կախվում էին նժարաձև տախտակները, որոնց վրա դարսվում էին քարերը։ Ջորիներով, ձիերով և էշերով են տեղափոխվել նաև բարձր լեռների ու բլուրների վրա կառուցված վանքերի մեծ մասի շինաքարերը։ Հավանորեն հին ժամանակներում գրաստներին հարմարեցված սարվածքների կողքերը փակ և տակից բացվող կափարիչներով են եղել։

Աշտարակցիները նույնպես ջրաղացքարը նախիշևանից էին բերում. քառանիվ սայլին այն բարձելու համար վերոհիշյալ ձևով սոնիավորում էին, ապա սայլի ետևի անիվները հանում, քարի սոնին զետեղում կշտանոցների վրա դրված բարձերին, այնուհետև հագցնում անիվները (նույն ձևով էլ իջեցնում էին)։

Ինչպես գլորելով, այնպես էլ սայլերով տեղափոխվող քարերը իջեցվում և տեղադրվում էին մի խումբ մարդկանց ձեռքով՝ երբեմն լծակների օգնությամբ։ Իսկ գերանները շենքերի վրա էին բարձրացնում պատին թեք դիրքով հենած երկու այլ գերանների վրայով՝ պարանների օգնությամբ՝ դեպի վեր գլորելով։

Ինչպես ակնհայտ երևում է, գերանատարության ու քարատարության ներկայացված ձևերի կիրառումն առանձին ընտանիքների ուժերից վեր էր։ Այդ պատճառով համայնքային փոխօգնության սկզբունքների հիման վրա աշխատուժերի՝ մարդկանց և լծու անասունների անհրաժեշտ համատեղում էր կատարվում։ XIX դ. և XX դ. սկզբներին Հայաստանի վերոհիշյալ շրջաններում համայնքային սովորույթները բավական պահպանված լինելով նպաստում էին ծանր փոխադրումները համատեղ կատարելու գործին։ Դրանք պահպանված էին պատմա-աշխարհագրական գործոնների աննպաստ պայմանների, ճանապարհների և համապատասխան փոխադրամիջոցների գրեթե իսպառ բացակայության հետևանքով։

Փոխօգնությունը նման պայմաններում հսկայական նշանակություն ուներ այն իմաստով, որ մարդկային ուժի միավորումը լրացնում էր հասարակ տեխնիկայի պակասավոր կողմերը։ Նախնական կոոպերացիայի այդ կիրառումները տեղի էին ունենում ոչ միայն հազվագյուտ ծանրությունների փոխադրումների ժամանակ, այլև կյանքի բազմաթիվ բնագավառներում. տուն կառուցելիս աղգականների, բարեկամների և հարևանների օգնությունը հետևողական բնույթ ուներ՝ հիմքերը փորելու օրվանից մինչև շենքը ծածկելն ու հարդարելը։ Այդ օգնությունն առավել մեծ եռանդով էր կատարվում հասարակական նշանակություն ունեցող շինարարության բնագավառում (ջրաղացների, ձիթահանների, դպրոցների, աղբյուր-հուշարձանների, կամուրջների, ճանապարհների, եկեղեցիների ու վանքերի կառուցումները)։ Քարերի տեղափոխմանը մասնակցող հարևանները ներկայանում էին «Իրենց սայլերով, եղներով և մարդկանցով»[24], գրում է Գր. Վանցյանը։ Վկայակոչելով Իգդիրի սովորությունները, Գր. Վանցյանը գրում է, թե այնտեղ «ջրաղացի ջրի հունը համայնքն էր մաքրում. օգնության այդ ձևը, որ փուշտա էր կոչվում, կատարվում էր «մեծ հանդիսով, զուռնայի նվագածությամբ»[25]։ «Ի՞նչ կարծիք, որ առաջ ո՛չ միայն համայնքը պարտական էր անհատի տունը հողով ծածկել, այլև տուն շինել նորան, ոչ միայն ջաղացի քարը բերելուն օգնել, այլև ջաղաց կառուցել ընդհանուր համայնքի համար, ինչպիսին գոյություն ունի ռուսաց մեջ և որպես այժմ կատարվում է Իգդիրում»[26]։

Քարատար և գերանատար խմբերի աշխատանքային ոգևորությունը բարձրացնելու, աշխուժացնելու և հոգնածությունը փարատելու համար կային

---

24 Գր. Վանցյան, նշվ. աշխ. («Մուրճ», 1896, № 1, էջ 90—91)։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 94։

մի քանի միջոցներ։ Դրանցից մեկը նվագախումբ ունենալն էր։ Զուռնայի կամ սրնգի նվագը տեղի էր ունենում ինչպես գործընթացի, այնպես էլ գագարի ժամանակ։ Դեռևս անցյալ դարի վերջերին նկատված էր, որ «Համայնական աշխատանքի պայմաններն այն են, որ ըստ մեծի մասին սոքա կատարվում են զուռնայի նվագածությամբ, եթե, իհարկե, հարմարություն կա. դա նպաստում է աշխատողների զվարթությանը և գործի հաջող ու եռանդուն առաջ գնալուն»[27]։

Գր. Վանցյանի վկայությամբ՝ «Շատ անգամ լծած եզների կամ գոմեշների պոզերից ու ճակատներից և կամ ձիթահանքի ու ջաղացի քարի վրայից կարմիր թաշկինակներ են կախում իբրև դրոշակներ, և եթե աշխատանքին մասնակցողների մեջ լավ խաղ ասող կամ սրախոս մեկը կա..., աշխատանքը ընդունում է մի կատարյալ խնջույքի բնավորություն»[28]։

Ժողովուրդը տեղ-տեղ այսօր էլ պահպանել է այդ հնամենի սովորությունների մի մասը։ Այդ տեսակետից առանձնանում են հատկապես Թալինի և Աշտարակի շրջանների սասունցիները և մասամբ՝ Ախալքալաքի կարնոհայերը։ Ինչպես անցյալում, այժմ էլ գործատիրոջ միակ վարձատրությունը մասնակիցներին կերակրելն է՝ ընտիր կերակուրներով ու խմիչքներով։

НЕКОТОРЫЕ ФОРМЫ ПЕРЕМЕЩЕНИЯ

В. А. БДОЯН

Доктор исторических наук

Резюме

Средства перемещения в Армении были столь же разнообразны, сколь разнообразен был ее рельеф. Перемещения больших тяжестей иллюстрированы в литературе весьма окудно.

Бревна и камни перемещались при помощи вьючных животных: волоком или на двух полозьях. Часто тяжести переносились ручным способом или на плечах.

---

27 Գր. Վանցյան, նշվ. աշխ., էջ 91։

Միանգամայն հնարավոր է, որ երկարատև աշխատանքի մեկնող անձնակազմի մեջ առկա լիներ նաև ժողովրդական բժիշկը՝ քերծվածքներին դեղ դնելու, կոտրվածքները կապելու և այլ նպատակներով (ժողովուրդն այժմ այդ բանը չի հիշում)։

28 Նույն տեղում։ Հմմտ. Շիրակի հետևյալ սովորությունը. գութանավարի «35 օրը լրանալուց հետո, երեկոյան պահուն, հոտաղները աղլուխները ճիպոտների ծայրին կապած դրոշակ են անում և ամեն մինը իր հորիքի լծին նստած, ուրախության երգերով գալիս են գյուղ» (Ա ղ. Մ խ ի թ ա ր յ ա ն, Փշրանք Շիրակի ամբարներից, «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ա, 1901, էջ 297)։

Կարմիր թաշկինակները դրոշակ դարձնելն ըստ երևույթին աղերսվում էր գործի հաջողությունն ապահովելու կրոնական գաղափարի հետ, որովհետև դա աստծու նվիրական գույնն էր համարվում։